

մերիզատին օդ մատուցելուց, ջերմաստիճանի բարձրացման դեպքում ապարատում պարունակվող նյութը թիփրով խառնելուց, և հնարավորություն տվեց ապարատավարների ամբողջ ուշադրությունը կենտրոնացնել տեխնոլոգիական պրոցեսը ճիշտ վարելու վրա (ակտիվատորի, ինի-

ցիատորի, ստաբիլիզատորի և այլ նյութերի ժամանակին մատուցումը):

Ռեալ հնարավորություն է ստեղծվել բարձրացնելու աշխատանքի արտադրողականությունը մեկ ապարատավարի կողմից սպասարկվող պոլիմերիզատորների քանակն ավելացնելու միջոցով:

## ՍՏԵՆԴԻ ԿՈՄՊՐԵՍՈՐԻ ԿԱՓՈՒՅՐԻ ՏԱԽՏԱԿՆԵՐԸ ԿԻՊԱՀՂԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Ն. ՍՈՒՔԻԱՍՅԱՆ  
ԻՆՋԵՆԵՐ

Երևանի կոմպրեսորների գործարանի թողարկած կոմպրեսորներում կափուլյրի տախտակները ձեռքով էին կիպահղկվում: Մի տախտակի մակերևույթը կազմում է 0,093 մ<sup>2</sup>, և նրա՝ ձեռքով կիպահղկումը մեկ բանվորի միջոցով տևում էր 20 ժամ:

Գործարանի աշխատակիցներ է. Թաթնուցի և Ռ. Պողոսյանի առաջարկով նախագծվել, պատրաստվել և արտադրության մեջ է ներդրվել 8 իլ ունեցող հատուկ ստենդ, որը ձեռքով կատարվող աշխատատար կիպահղկումը փոխարինել է մեքենայով:


Իլերը դասավորված են երկու շարքով, մեկ շարքում՝ 4 հատ: Յուրաքանչյուր իլը պտտական շարժում է ստանում ընդհանուր փոխհաղորդիչ լիսեռից, որի վրա տեղադրված է մի զույգ կոնաձև ատամնանվակ (կարելի է տեղադրել նաև մի զույգ շեղատամնանվակ): Յուրաքանչյուր իլի պտտման արագությունը 90 պտ/րոպե է: Փոխհաղորդիչ լիսեռները շարժման մեջ են դրվում էլեկտրաշարժիչի օգնությամբ՝ ռեդուկտորի միջոցով (նկ. 1):

Իլերի ծայրերում մոնտաված են ռետինե սկավառակներ, որոնք կափուլյրատախտակները գամասեղներով ամրացնելու համար սկավառակի կենտրոնից տարբեր հեռավորությունների վրա անցքեր ունեն:

Մի կափուլյրանի տախտակը անշարժ կերպով տեղադրվում է ստենդի սեղանի վրա, իսկ նրա

վրա, ռետինե սկավառակի օգնությամբ, պտտվում է մյուս կափուլյրի տախտակը, ինչպես իր առանցքի շուրջը, այնպես էլ արտակենտրոն ձևով: Այդպիսի պտույտը լիովին պահպանում է կիպահղկման կանոնները:


Տվյալ առաջարկության արմատավորումը մեծ



Նկ. 1. Ստենդի սխեման:  
1—էլեկտրաշարժիչ, 2—ռեդուկտոր, 3—կոնաձև զույգ, 4—փոխհաղորդիչ լիսեռ, 5—իլիկ, 6—ռետինե սկավառակ, 7—գամասեղ, 8—շարժվող տախտակ, 9—սեղանի տախտակ, 10—ստենդի սեղան, 11—գլանաձև զույգ:

չափով բարելավել է տեխնոլոգիական պրոցեսը, բարձրացրել արտադրանքի որակը: Դրա շնորհիվ 8 բանվորի աշխատանքը փոխարինվել է մեկ մեքենայով:

Գործարանը ստացել է 120 հազ. ուրբու տարեկան պայմանական տնտեսում:



Նկ. 2. Կոմպրեսորի կափուլրի տախտակների կիպահղկման ստենդի ընդհանուր տեսքը:

## ՇԱՂԱԽՈՂ ՎԱԶԱՆՆԵՐԻ ԱՎՏՈՄԱՏԻԿ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

### Վ. ԳԻՆՏԻՉ

Թումանյանի հրակայուն նյութերի գործարանի գլխավոր մեխանիկ

Թումանյանի հրակայուն նյութերի գործարանը իր մեքենայացումով պատկանում է երկրի հրակայուն նյութերի առաջին գործարանների թվին: Սակայն այստեղ, մինչև վերջին ժամանակներս, տեխնոլոգիական շղթայում ամենանեղ տեղը եղել է բովախառնուրդի կազմելն ու խառնելը: Բովախառնուրդի պատրաստման գործում խախտումները մշտական երևույթ էին: Այդ դրուժյունը կարելի էր վերացնել վաղանների ավտոմատիկ կառավարման միջոցով:

Ներկա հողվածի հեղինակը մշակել և արտադրության մեջ կիրառել է շաղախող վազանների ավտոմատիկ կառավարման պարզագույն սխեման:

Սխեմայի մեջ ծրագրային ուղեին փոխարինող հիմնական հանգույցը հանդիսանում է անհրաժեշտ քանակությամբ և անհրաժեշտ հարաբերությամբ խառնիչ կոմպոնենտների՝ փոշու, կավի և շամոտի մատուցման կարգավորիչը: Կարգավորիչը բաղկացած է մի զույգ գլանաձև